ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՈՒ
«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ք. Երևան **«15» մարտ 2021թ.**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը (այնուհետև՝ Կողմեր)՝

ելնելով

- կրթության ոլորտում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող քաղաքականությունից,

հաշվի առնելով

- ներկայիս փուլում կրթության առջև ծառացած գլոբալ մարտահրավերները,
- Արցախյան երկրորդ պատերազմը և դրա հետևանքներով պայմանավորված կրթության արդիականացման պահանջը,
- ազգային անվտանգության և կրթության փոխկապակցվածությունը,
- հայեցի կրթության և դաստիարակության կազմակերպման, ուսուցման նոր տեխնոլոգիաներին, ձևերին և մեթոդներին ուսուցիչների տիրապետման և նրանց մասնագիտական զարգացման նոր մոտեցումների անհրաժեշտությունը.

և նկատի ունենալով

- ՀՀ հանրակրթական դպրոցների և սփյուռքի կրթօջախների հետ հրատարակչական ոլորտում բազմակողմանի աշխատանքը, մասնավորապես՝ ուսումնական գրականության ստեղծում և հրատարակում, գրքերի ցուցահանդեսների կազմակերպում, աշակերտական ընթերցումների, մրցույթների, ցերեկույթների անցկացում, ուսուցիչների վերապատրաստում և այլն,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ՀՀ-ում ընթացող կրթական բարեփոխումների շրջանակներում և դրանց արդյունավետ իրականացման նպատակով Կողմերը ուղղելու են իրենց ջանքերը Հայաստանի և սփյուռքի ուսուցիչների մանկավարժական որակների բարելավմանը և մասնագիտական որակավորման շարունակական բարձրացմանը:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը, իրենց լիազորությունների և կանոնադրական դրույթների շրջանակներում, կհամագործակցեն ՀՀ ուսուցիչների մասնագիտական գիտելիքների և կարողությունների շարունակական զարգացման, կրթության բովանդակության և տեխնիկական սպասարկման ոլորտներում: Կողմերը կնախաձեռնեն և քայլեր կձեռնարկեն սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, ուսումնական գործընթացի բովանդակային բարելավման և գործող ծրագրերի անխափան ու արդյունավետ իրագործման համար:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը քայլեր կձեռնարկեն ուսուցիչների մասնագիտական զարգացման նոր ծրագրերի, ուսումնական, մեթոդական ձեռնարկների մշակման և դրանց փորձաքննության ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը համատեղ կկազմակերպեն և կանցկացնեն ուսուցիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ, ինչպես նաև գիտելիքների հարստացմանը և նոր կարողությունների և հմտությունների ձևավորմանն ուղղված ընթացիկ ու թեմատիկ կարճատև այլ միջոցառումներ՝ դասընթացների, պրակտիկ պարապմունքների, սեմինարների և կլոր սեղանների տեսքով, ինչպես առկա, այնպես հեռավար ձևաչափով:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը, իրենց լիազորությունների և կանոնադրական դրույթների շրջանակներում, կաջակցեն ՀՀ հանրակրթական դպրոցներին մասնագիտական գրականության, ուսումնամեթոդական ձեռնարկների, ուսումնադիտողական պարագաների տրամադրմանը և ժամանակակից պահանաջներով կահավորված և տեխնիկական միջոցներով հագեցված լսարանների ձևավորմանը:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը համատեղ ջանքեր կգործադրեն սփյուռքի կրթական պահանջներին համապատասխանող ուսումնական գրականության պաշարի ստեղծման ուղղությամբ՝ նոր ձեռնարկների, գրքերի ստեղծման կամ առկա գրականության արևելահայերենով (դասական ուղղագրությամբ) և արևմտահայերենով հրատարակման կամ թարգմանչական աշխատանքի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը հատուկ ուշադրություն կդարձնեն էլեկտրոնային դասերի նմուշ-օրինակների, էլեկտրոնային նյութերի, ուսումնաօժանդակ ձեռնարկների տրամադրման համար երկկողմանի պայմանների ստեղծմանը:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերը կխրախուսեն և համատեղ կկազմակերպեն պետական և համահայկական մանկապատանեկան միջոցառումներ:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերը կփոխանակեն տեղեկություններ՝ սփյուռքում առկա կրթօջախների և դրանց կրթական կարիքների, ուսումնական գրականության պիտանելիության, բարելավման մասին վերլուծությունների, ինչպես նաև ՀՀ-ում և սփյուռքում առկա ռեսուրսների և պայմանների վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերը կանցկացնեն պարբերական հանդիպումներ, աշխատանքների քննարկումներ, խորհրդակցություններ՝ համատեղ աշխատանքային պլանը և օրակարգը ձևավորման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Հուշագիրը բաց է Հուշագրում չնշված և Հուշագրի նպատակներից բխող այլ դրութների համար:

Սույն Հուշագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ առանձին արձանագրությունների միջոցով, որոնք հանդիսանում են Հուշագրի անբաժանելի մասը:

Սույն համագործակցության հուշագիրը բաղկացած է 11 հոդվածներից, ստորագրվել է 2021 թվականի Սեպտեմբեր 15-ին՝ Երևան քաղաքում:

Սույն Համագործակցության հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ: Հուշագրի գործողությունը դադարեցնել ցանկացող կողմը պարտավոր է մյուս կողմին այս մասին գրավոր տեղեկացնել առնվազն մեկ ամիս առաջ:

Սույն հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք հավասարազոր իրավաբանական ուժ ունեն:

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
տեղակալ
ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ստորագրություն

«Էդիթ Պրինտ» հրատարակչության
Նախագահ
ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ստորագրություն